

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

03-ը հունիսի 2017թ.

Քարտուղար՝ Կ.Հ. Հովսեփյան

Ներկա էին խորհրդի 10 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների , կուրսային աշխատանքների պաշտպանության արդյունքների քննարկում:*
/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /
2. *2016-17թթ. ուս. տարվա II կիսամյակի II ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:*
/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /
3. *2017-21թթ. ուս. տարվա աշխատանքային, ուսումնական պլանների քննարկում և հաստատում:*
/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /
4. *Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:*
/զեկ. Կ. Հ. Հովսեփյան /

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Կ. Հ. Հովսեփյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը: Նա ներկայացրեց „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, մասնագիտության IV կուրսի ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Մասնակցել են 21 ուսանող, ըստ որի գրանցվել են հետևյալ արդյունքները.

զերազանց-9 զերազանց-9

լավ-4 լավ-8

բավարար-8 բավարար-4

Այնուհետև նա նշեց, որ 2016-17թթ. ուստարվա II կիսամյակում կուրսային աշխատանք էր նախատեսված «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության III կուրսում: Կազմակերպվել և անց է կացվել կուրսային աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները հետևյալն է.

գերազանց-3,

լավ-3,

բավարար-4

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք նշեցին, որ պետական քննությունը, ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանությունը իրականացվել է պատշաճ մակարդակով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել պետական քննության, ավարտական և կուրսային աշխատանքների արդյունքները բավարար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը ներկայացրեց 2016-17թթ. ուս. տարվա II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները /առաջադիմությունը կցվում է արձանագրության տեքստին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս. Ս. Սիմոնյանը, Հ. Ա. Քամայանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել II կիսամյակի II ընթացիկ քննությունների արդյունքները բավարար:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց Կ. Հ. Հովսեփյանը: Նա զեկուցեց 2017-21թթ. ուս. տարվա ուսումնական պլանների կազմման գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը և Ս. Ս. Սիմոնյանը: Նրանք ներկայացրին, 2017-21թթ. ուս. տարվա ուսումնական պլանները, որոնք կազմվել են „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, և „Աշխարհագրություն,, մասնագիտությունների համար և ներկայացրին հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2017-21թթ. ուստարվա ուսումնական պլանները:

Օրակարգի չորրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար Կ. Հ. Հովսեփյանը ներկայացրեց, որ ըստ մասնագիտությունների կազմվել են կրթական ծրագրերը, կատարվել են որոշ բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ, որոնք հիմնված են աշխատաշուկայի արդի պահանջների

վրա: Կրթական ծրագրերի վերջնարդյունքները ձևափոխվել են որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կատարվել է կրթական ծրագրերի վերջնարդյունքների համեմատական վերլուծություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցույանը Բ. Վ. Օթարյանը և ուրիշներ: Նրանք ներկայացրին, որ ավարտվել են կրթական ծրագրերի կազմումը և առաջարկեցին ներկայացնել հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2017-21թթ. ուս.տարվա կրթական ծրագրերը համապատասխան՝ աշխատաշուկայի արդի պահանջներին իր հիմքում ունենալով որակավորումների ազգային շրջանակը:

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ.Հ. Հովսեփյան